բեք չէր վառոել այդ կրակը, եթէ ոչ, նա այնպէս անգութ կերպով չէր քարկոծի «սիրահարի գերեզմանը»...

Մարօն մի տեսակ ստրուկ էր, որպէս Սոնան. նա ճնշոած էր ծնողաց բռնակալութեան ներքոյ, իսկ Մարօն վաղեմի նախապաշարմունքների, բայց վերջինն աւելի սարսափելի կերպով խեղդում է ամէն մի հոգեկան թարմ եւ ընդաբոյս զգացմունք...

«Հա՛յ, թող սիրէ, լսւում էր նա, այդ ոչինչ... աղջկայ կամքով խօ չէ»:

Եւ իրաւ, միթէ՞ հայ աղջիկը կամք ունի. միթէ՞ նա իր զգացմունքների տէրն է:

Տարուբերոելով այսպիսի մտախոհութեանց մէջ, ես բոլորովին մոռացել էի Մարօի պատոերը ճանապարհի ուղղութեան մասին: Ես հասկացայ, որ մոլորոած եմ միայն այն ժամանակ, երբ իմ առջեւ բացոեցաւ մի ահագին կիրճ, որից անցնել անհնարին էր: Ետ դառնալ եկած ճանապարհով չէի կարող, որովհետեւ ամենեւին չէի յիշում, թէ որպէ՞ս յայտնոեցայ այնտեղ, իսկ յառաջ գնալ անկարելի էր:

Ես բոլորովին շփոթոեցայ:

Արեւն արդէն սկսել էր թեքոել դէպի գիշերային մուտքը, երեկոյեան ցուրտը հետզհետէ դառնում էր անտանելի: Մի կողմից ես զգում էի յոգնածութիւն, միւս կողմից, քաղցը նեղում էր ինձ: Որքա՜ն երկար պէտք է թափառած լինէի ես, որ անցուցել էի այնքան ժամանակ. իսկ Մարօն ասում էր, թէ կը հասնեմ որսորդութեան տեղը ո՛չ յետոյ, քան կէսօրից երկու ժամ անցած: Իսկ այժմ երեկոյ էր: Արեւի թեքոած ճառագայթները լուսաւորում էին սարերի գագաթները միայն, որոնց ստոերը գնալով՝ ընդարձակ եւ հսկայական տարածութիւն էր ստանում:

Ես յիշեցի, Մարօն ինձ ճանապարհ գցելու ժամանակ դրեց իմ որսորդական մաղախի մէջ մի շիշ, դուրս բերեցի, նա լիքն էր գինով: Մաղախիս մէջ գտայ եւ լաւաշում փաթաթած սառն միս: Իմ ճաշն արդէն պատրաստ էր: Նստելով փափուկ խոտերի վրայ, ես յագեցրի իմ քաղցը, սպառոած ուժերս կրկին վերադարձան, ես բոլորովին հանգստացայ: Այժմ ի՞նչ պէտք է անել, դէպի ո՞ր կողմ գնալ — կրկին զարթեցաւ իմ մէջ անհանգստութիւնը:

Աչք ածելով իմ չօրէք կողմը, ես յարմար համարեցի վեր ելնել մերձաւոր սարի բարձրութիւնը եւ այնտեղից դիտել, թէ դէպի ո՞ր կողմը կարելի էր գնալ: Այդ տեւեց քառորդ ժամ: Բարձրաւանդակից ես տեսայ սարի միւս կողմում դէպի աջ տարածւում էր մի նեղ տափարակ, որի վրայ տեղ-տեղ նկատելի էին լինում սեւ եւ շարժուն կէտեր, որոնց ամբողջ հաւաքածուն